



«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ

# 2021թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի միջև 19.02.2021թ.-ի կնքված՝ «Ավտոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն՝ ուսումնասիրություններ և փորձաքննություններ» ծրագրի No 1 պայմանագրի կատարման



**«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»**

---

**Ս. ՄԱՉՅԱՆ**

**«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի  
գլխավոր տնօրեն  
31 մարտի 2021թ.**

«Ավրոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն» ուսումնասիրություններ  
և փորձաքննություններ» ծրագրի պայմանագրի շրջանակներում «Ճանապարհային  
դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի ուժերով 2021թ. առաջին եռամսյակում իրականացվել են  
հետևյալ աշխատանքները, ըստ ներքոհիշյալ ենթածրագրերի՝

1. ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՑԱՆՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒ ԴՐԱՆՑ  
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....5

1.1 Ավրոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների ծածկի վիճակի  
տեխնիկական տվյալների հավաքագրում.....6

1.2 Երթևեկության ինտենսիվության չափումներ և վերլուծություն .....6

1.3 Աջակցություն պետական նշանակության ավրոմոբիլային ճանապարհների  
վերականգնման ծրագրերի մշակմանը ..... 13

1.4 Ավրոմոբիլային ճանապարհների գույքագրում, տվյալների շտեմարանի լրացում և  
վարում ..... 13

1.5 Ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավում.....14

2. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ  
ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ԿԱՊԱԼԱՌՈՒ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ,  
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄՇԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ԳՆԱՀԱՏՈՒՄ..... 16

2.1 Կատարված աշխատանքների ընդունման նպատակով միջպետական և  
հանրապետական նշանակության ավրոմոբիլային ճանապարհների ընթացիկ  
ձմեռային պահպանման աշխատանքների պարբերական դիտարկում և գնահատում:  
Ավրոմոբիլային ճանապարհների վիճակի գնահատում՝ հաջորդ տարվա պահպանման  
և սպասարկման պլանի կազմման նպատակով .....17

2.2 Կատարված աշխատանքների ընդունման նպատակով ավրոմոբիլային  
ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների,  
կամուրջների, պարսպող համակարգերի պահպանման և գծանշման աշխատանքների  
աշխատանքների պարբերական դիտարկում և գնահատում: Առանձին պահպանման



հանձնվող թունելների, կամուրջների և պարսպող համակարգերի վիճակի գնահատում՝ հաջորդ տարվա պահպանման և սպասարկման պլանի կազմման նպատակով.....	19
2.3 Ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգման աշխատանքների մշտադիտարկում, հսկողություն և գնահատում.....	21
3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ/ԿԱՄ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄ.....	23

1. ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՑԱՆՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒ  
ԴՐԱՆՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ  
ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## **1.1 Ավտոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների ծածկի վիճակի ուսումնասիրություն**

Հաշվետու եռամսյակում իրականացվել են նախապատրաստական և պլանավորման աշխատանքներ, ինչպես նաև սարքավորումների կարգաբերում:

Ավտոմոբիլային ճանապարհների ծածկի վիճակի ուսումնասիրությունը (կախված եղանակային պայմաններից) սկսվում է ապրիլ ամսին և ավարտվում նոյեմբեր ամսին:

Բոլոր կատարված աշխատանքների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

## **1.2 Երթևեկության ինտենսիվության տվյալների հավաքագրում**

Հայաստանի Հանրապետության 3 միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների 5 կետերում տեղակայված են ավտոմոբիլային տրանսպորտի ինտենսիվությունը չափող 5 առցանց աշխատող SIEMENS մակնիշի հաշվիչներ:

Սրացված ինտենսիվության տվյալները հանդիսանում են HDM-4 տնտեսագիտական վերլուծության ծրագրի մուտքային տվյալ (AADT – միջին օրական ինտենսիվությունը տարվա կտրվածքով):

Հաշվիչները տեղակայված են հետևյալ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա.

Կետ No1 Մ-2 Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի Իսլամական Հանրապետության սահման ա/ճ-ի կմ 298+000 (Կապանի ՃՇՇ-ի մոտ) – 1 հաշվիչ

Կետ No2 Մ-2 Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի Իսլամական Հանրապետության սահման ա/ճ-ի կմ 367+250 (Մեղրու ՃՇՇ-ի ա/բ գործարանի մոտ) – 1 հաշվիչ

Կետ No3 Մ-3 Թուրքիայի Հանրապետության սահման - Մարգարա - Վանաձոր – Տաշիր - Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 126+000 (Լոռու ՃՇՇ-ի մոտ) - 1 հաշվիչ

Կետ No4 Մ-3 Թուրքիայի Հանրապետության սահման - Մարգարա - Վանաձոր - Տաշիր - Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 135+160 (Պուշկինի թունելի մոտ) – 1 հաշվիչ


Կետ No5 Մ-4 Երևան - Սևան - Իջևան - Ադրբեջանի Հանրապետության սահման ա/ճ կմ 80+000 (Դիլիջանի թունելի մոտ) – 1 հաշվիչ

Կատարվել են Հայաստանի Հանրապետության 3 միջպետական ավտոճանապարհների 5 կետերում տեղակայված հաշվիչների կարգաբերման աշխատանքներ և տրանսպորտային միջոցների ինտենսիվությունը չափող հաշվիչների տվյալների հավաքագրում:

Հաշվետու ժամանակաշրջանում տեղակայված հաշվիչների տվյալների միջին օրական ինտենսիվությունը հետևյալն է.


1. Մ-2 Երևան – Երասխ – Գորիս - Մեղրի - Իրանի Իսլամական Հանրապետության սահման ա/ճ-ի կմ 298 (Կապանի ՃՇՇ-ի մոտ)

Ուղղությունը	Միջին օրական ինտենսիվությունը (ընդամենը՝ տր.միջոց)	Միջին օրական ինտենսիվությունը ըստ տրանսպորտային միջոցների դասակարգման (ավտոմոբիլ)		
		թեթև մարդատար (1)	բեռնատար (2)	բեռնատար կցորդով (3)
Ընդամենը	4426	3970	336	120




2. Մ-2 Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի Իսլամական Հանրապետության սահման ա/ճ-ի 367+250 (Մեղրու ՃՇՇ-ի ա/բ գործարանի մոտ)

Ուղղությունը	Միջին օրական ինտենսիվությունը (ընդամենը՝ տր.միջոց)	Միջին օրական ինտենսիվությունը ըստ տրանսպորտային միջոցների դասակարգման (ավտոմոբիլ)		
		թեթև մարդատար (1)	բեռնատար (2)	բեռնատար կցորդով (3)
Ընդամենը	682	481	98	103



3. Մ-3 Թուրքիայի Հանրապետության սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր – Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 126 (Լոռու ՃՇՇ-ի մոտ)


Ուղղությունը	Միջին օրական ինտենսիվությունը (ընդամենը՝ տր.միջոց)	Միջին օրական ինտենսիվությունը ըստ տրանսպորտային միջոցների դասակարգման (ավտոմոբիլ)		
		թեթև մարդատար (1)	բեռնատար (2)	բեռնատար կցորդով (3)
Ընդամենը	7567	7354	137	76






4. Մ-3 Թուրքիայի Հանրապետության սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր -  
Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 135+160 (Պուշկինի թունելի մոտ)

Ուղղությունը	Միջին օրական ինտենսիվությունը (ընդամենը՝ տր.միջոց)	Միջին օրական ինտենսիվությունը ըստ տրանսպորտային միջոցների դասակարգման (ավտոմոբիլ)		
		թեթև մարդատար (1)	բեռնատար (2)	բեռնատար կցորդով (3)
Ընդամենը	2485	2344	92	49




5. Մ-4 Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի Հանրապետության սահման ա/ճ-ի կմ 80  
(Դիլիջանի թունելի մոտ)

Ուղղությունը	Միջին օրական ինտենսիվությունը (ընդամենը՝ տր.միջոց)	Միջին օրական ինտենսիվությունը ըստ տրանսպորտային միջոցների դասակարգման(ավտոմոբիլ)		
		թեթև մարդատար (1)	բեռնատար (2)	բեռնատար կցորդով (3)
Ընդամենը	3980	3691	132	157




Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված չափումների հիման վրա կազմվել է տրանսպորտային միջոցների հոսքի միջին օրական ինտենսիվության և միջին օրական ինտենսիվության համեմատության գրաֆիկները՝ ըստ չափման կետերի.

**2021թ առաջին եռամսյակի չափումների արդյունքների գրաֆիկական պատկերը**



**2020-2021թթ առաջին եռամսյակի չափումների արդյունքների համեմատական գրաֆիկական պատկերը  
հերկյալն է**



Ինչպես երևում է 2020-2021թ. համեմատական գրաֆիկից ավտոտրանսպորտային միջոցների ինտենսիվությունը

Կետ - 1 Կապանի ՃՇՇ-ի մոտ՝ աճ

Կետ - 2 Մեղրու ՃՇՇ-ի ա/բ գործարանի մոտ՝ նվազում

Կետ - 3 Լոռու ՃՇՇ-ի մոտ՝ աճ

Կետ - 4 Պուշկինի թունելի մոտ՝ աճ

Կետ - 5 Դիլիջանի թունելի մոտ՝ աճ

HDM-4 տնտեսագիտական վերլուծության ծրագրի համար անհրաժեշտ մուտքային տվյալները (AADT – տարվա կտրվածքով միջին օրական ինտենսիվությունը) հավաքագրվել են նաև շարժական հաշվիչների միջոցով:

Ըստ շարժական հաշվիչների գրանցման տվյալների, միջին օրական ինտենսիվությունը հետևյալն է.

Միջպետական և հանրապետական ավտոճանապարհներ

No	Ճան կող	Ճանապարհի անվանումը	կմ	մարդատար	բեռնատար	բեռնատար կցորդով	ընդամենը
1	Մ-4	Երևան-Սևան-Իջևան-Ադր.Հանրապետության սահման	10.3	34892	1932	184	37008
2	Հ-6	/Հ-2/ –Նոր Գեղի - Եղվարդի տրանսպորտային հանգույց - /Մ-1 /	3.5	3471	192	18	3681
3			9	3107	170	16	3293
4			24	3370	186	16	3572

Հաշվետու եռամսյակում մշտական տեղադրված հաշվիչներից, ինչպես նաև շարժական հաշվիչներով և ակնադիտական եղանակով տվյալների հավաքագրման նպատակով իրականացվել է 5 այցելություն 9 կետերում:

2021 թ.	Նախատեսված	Փաստացի
հաշվեկետ	9	9
այցելություն	5	5

Բոլոր կատարված աշխատանքների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

### **1.3 Աջակցություն պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վերականգնման ծրագրերի մշակմանը**

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից, պարբերաբար իրականացվել են հետևյալ աշխատանքները և միջոցառումները

- տեխնիկական և մասնագիտական աջակցություն ոլորտի խորհրդատուներին,
- մասնակցություն միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից կազմակերպված սեմինարներին, կոնֆերանսներին և քննարկումներին,
- իրականացվել է մասնագիտական աջակցություն «Լոկատոր» ՓԲԸ մասնագետներին:

2021 թվականի ընթացքում «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից հավաքագրված, ամփոփված և համադրված տվյալների հիման վրա համակարգչային HDM-4 տնտեսագիտական վերլուծությունների մոդելի կիրառման միջոցով կիրականացվի վերականգնման առաջարկվող ճանապարհահատվածների միջնաժամկետ ծրագրի մշակում: 2023թ. վերականգնմանն առաջարկվող ճանապարհահատվածների վերաբերյալ առաջարկությունները կներկայացվեն տարեկան հաշվետվության հավելվածում:

Բոլոր կատարված աշխատանքների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

### **1.4 Ավտոմոբիլային ճանապարհների գույքագրում**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են նախապատրաստական և պլանավորման աշխատանքներ, հավաքագրված տվյալների մշակում, ինչպես նաև տվյալների շտեմարանի լրացում և վարում:

Ավտոմոբիլային ճանապարհների գույքագրման աշխատանքների գործընթացը (կախված եղանակային պայմաններից) սկսվում է ապրիլ ամսին և ավարտվում նոյեմբեր ամսին:

Բոլոր կատարված աշխատանքների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

### **1.5 Ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավում**

Հաշվետրու ժամանակահատվածում «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները և միջոցառումները.

1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոճանապարհների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծախսերի շրջանակներում ճանապարհների անվտանգության ծառայության ինժեներների կողմից իրականացվել է 19 ավտոճանապարհների 25 նախագծերի փորձաքննություն: Արդյունքները ներկայացվել են սահմանված պատասխանատու ստորաբաժանում:

2. ՀՀ վարչական դատարանի վարույթում գտնվող վարչական գործերով ապացույց պահանջելու վերաբերյալ տեղեկատվություններ են տրվել վարչական դատարանի 42 որոշումների կապակցությամբ:

3. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ ոստիկանության և այլ գերատեսչություններ երթևեկության անվտանգության բարելավման նպատակով ներկայացվել են ընդհանուր թվով 14 կարծիք և առաջարկություն:

4. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մարզպետարանների, կազմակերպությունների ու ընկերությունների, քաղաքացիների կողմից ներկայացմամբ, առաջարկությունների, դիմումների հիման վրա տրվել են հանձնարարականներ՝

4.1. Տրեղադրել, փոխարինել կամ ապամոնտաժվել է 12 հատ ընդհանուր թվով նշաններ,

4.2. Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ին հանձնարարվել է Հ-5 Հ6(Նոր գեղի)-Արգել-Արզական-Հրազդան(Հ85) ավտոճանապարհին հարակից գյուղերում տեղակայված անօրինական արհեստական անհարթությունների ապամոնտաժումը: Նույն բովանդակությամբ երկու գրություն է ներկայացվել.

4.3. Արագածոտնի մարզպետի առաջարկության համաձայն հանձնարարական է տրվել Մ-3 ավտոճանապարհի Ուշի գյուղի խաչմերուկում վերացնելու գծանշման սահմանափակումները.

4.4. Արմավիրի ճանշինկազմակերպությանը հատկացվել են 4 ընդհանուր թվով ճանապարհային նշաններ Մ-5 ավտոճանապարհի Արմավիր քաղաքի Նորապարին կից տրանսպորտային հանգույցում տեղակայելու նպատակով.

5. Ճանապարհային երթևեկության անվտանգության և կազմակերպման բարելավման նպատակով, ինչպես նաև ճանապարհատրանսպորտային պատահարների (այսուհետ՝ ՃՏՊ) կանխման ուղղությամբ տրվել են տեղեկություններ՝

5.1. ՀՀ ճանապարհային ոստիկանության կողմից ներկայացված Արագածոտնի, Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի ավտոճանապարհներին հայտնաբերված թերությունների և դրանց վերացման ուղղությամբ ձեռնարկվող միջոցների վերաբերյալ.

5.2. Մ-14 ավտոճանապարհի 1+300կմ տեղամասում տեղի ունեցած ՃՏՊ-ի վերաբերյալ.

5.3. ՌԴ զինվորական քննչական վարչության 519 բաժնի կողմից՝ ՃՌ-ի միջոցով Մ-2 ավտոճանապարհի Ելփին գյուղի հարակից հատվածում ճանապարհային պայմանների մասին տեղեկատվություն հայտնելու վերաբերյալ.

5.4. ՃՌ-ին տեղեկատվություն է ներկայացվել Մ-2 ավտոճանապարհի 24-25կմ տեղամասում ՃՏՊ կանխման ուղղությամբ ձեռնարկվող միջոցների մասին.

6. Վերլուծություն կատարելու նպատակով ճանապարհային ոստիկանությունից խնդրվել է ներկայացնել ամսական կտրվածքով 2019 և 2020 թվականներին միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհներին տեղի ունեցած ՃՏՊ տվյալները.

7. ՀՀ ավտոճանապարհներով իրականացվող ծանրաքաշ և մեծ եզրաչափերով բեռներն անվտանգ փոխադրելու նպատակով երթուղիների ընտրության վերաբերյալ տրվել են 17 եզրակացություններ:

Բոլոր կատարված աշխատանքների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

2. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ  
ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ԿԱՊԱԼԱՌՈՒ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ  
ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ



**2.1 Կատարված աշխատանքների ընդունման նպատակով միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների պարբերական դիտարկում և գնահատում: Ավտոմոբիլային ճանապարհների վիճակի գնահատում՝ հաջորդ փարվա պահպանման և սպասարկման պլանի կազմման նպատակով**

Հաշվետու ժամանակահատվածում «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից իրականացվել է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների ձմեռային պահպանման, կապալառուների կողմից իրականացված աշխատանքների մասնագիտական հսկողություն հետևյալ մարզերում.

Մարզի անվանումը	Սպասարկվող ավտոմոբիլային ճանապարհների ընդհանուր երկարությունը, կմ
	Ձմեռային
Արագածոտն	275.7
Արարատ	243.5
Արմավիր	214.8
Գեղարքունիք	386.4
Կոտայք	318.5
Լոռի	416.7
Շիրակ	270.3
Սյունիք	497.2
Վայոց Ձոր	239.0
Տավուշ	426.7
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>3288.8</b>

Ընթացիկ ամառային պահպանման ժամանակահատվածն է՝ ապրիլի 1-ից նոյեմբերի 15-ը: Ընթացիկ ձմեռային պահպանման ժամանակահատվածն է՝ նոյեմբերի 16-ից մինչև հաջորդ տարվա մարտի 31-ը:

Ձմեռային պահպանման ժամանակահատվածում կազմակերպվել է շուրջօրյա հերթապահություն ավտոճանապարհների անցանելիության վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու և անհրաժեշտության դեպքում համապատասխան միջոցառումներ կազմակերպելու նպատակով:

Հերթապահությունը իրականացվում է հետևյալ գրաֆիկով՝

- աշխատանքային օրերին՝ ժամը 18<sup>00</sup> մինչև հաջորդ օրվա 9<sup>00</sup>
- ոչ աշխատանքային և տոնական օրերին՝ շուրջօրյա:

Ձմեռային պահպանման աշխատանքների ընդունումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2010թ. նոյեմբերի 4-ին հաստատված N 1419-Ն կարգի համաձայն:



Հաշվետրու եռամսյակում նախատեսված աշխատանքները թերի կատարելու պարտադրո՞վ կապալառու կազմակերպություններից ընդհանուր առմամբ պահվել է 310.6 հազ. դրամ:

Կատարվել է համապատասխան գրառումներ գրանցման մատյաններում, որի հիման վրա ընդունվել է կապալառու կազմակերպությունների կատարած ընթացիկ ծմեռային պահպանման աշխատանքները:

Կապալառու կազմակերպությունները կատարել են պայմանագրերով ստանձնած պարտավորությունները, որի ակնկալվող արդյունքը՝ ծմեռային ժամանակաշրջանում անվտանգ երթևեկության ապահովումը, համապատասխան է եղել նախատեսված պահանջներին:

Բոլոր կատարված հսկողությունների և ուսումնասիրությունների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

**2.2 Կատարված աշխատանքների ընդունման նպատակով ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների, պարսպող համակարգերի պահպանման և գծանշման աշխատանքների աշխատանքների պարբերական դիտարկում և գնահատում: Առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների և պարսպող համակարգերի վիճակի գնահատում՝ հաջորդ տարվա պահպանման և սպասարկման պլանի կազմման նպատակով**

Հաշվետրու ժամանակահատվածում «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից իրականացվել է ընդհանուր օգրագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների, պարսպող համակարգերի պահպանման և գծանշման աշխատանքների կապալառուների կողմից իրականացված միջոցառումների մասնագիտական հսկողություն, այդ թվում՝

➤ **Թունեւելներ**

- Պուշկինի թունել
- Դիլիջանի թունել
- Նալբանդի թունել:

➤ **Կամուրջներ**

- Արաքս գետի վրայի Մեղրիի կամուրջ,
- Հ-6 Աբովյան - Եղվարդ - Աշտարակ ավտոմոբիլային ճանապարհի Հրազդան գետի վրայի կամուրջ,
- Մ-1 Երևան - Գյումրի - Վրաստանի սահման ավտոմոբիլային ճանապարհի Քասախ գետի վրայի կամուրջ,
- Մ-3 Մարգարա - Վանաձոր - Տաշիր - Վրաստանի սահման ավտոմոբիլային ճանապարհի Ձորագետ գետի վրայի կամուրջ,
- Զերմուկ քաղաքի կամուրջ:

Պահպանման աշխատանքների ընդունումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի կողմից 2010թ. դեկտեմբերի 12-ի N 710-Ն հրամանով հաստատված ընդունման կարգի համաձայն:

Նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում թերություններ չեն հայտնաբերվել:

➤ **Պարսպող համակարգեր**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող 764.325 կմ ընդհանուր երկարությամբ պարսպող համակարգերի պահպանման կապալառուների կողմից իրականացված աշխատանքների մասնագիտական հսկողություն:

Պահպանման աշխատանքների ընդունումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի կողմից 2011թ. փետրվարի 24-ի N 79-Ն հրամանով հաստատված ընդունման կարգի համաձայն:

Հաշվետու եռամսյակում նախատեսված աշխատանքները թերի կատարելու պարճառով կապալառու կազմակերպություններից ընդհանուր առմամբ պահվել է 80.4 հազ. դրամ:

Կատարվել է համապատասխան գրառումներ, ինչպես նաև անհամապատասխանությունների վերաբերյալ գրանցման մատյաններում, որի հիման վրա ընդունվել է կապալառու կազմակերպությունների կողմից կատարված պահպանման աշխատանքները:

Հսկողության ընթացքում հայտնաբերված բոլոր թերությունները և դրանց վերացման ուղղությամբ ձեռնարկված քայլերը կրում էն պարբերական բնույթ և կատարվում էն ՀՀ կառավարության 04.11.2010 թվականի N1419-Ն որոշման հիման վրա:

Բոլոր կատարված հսկողությունների և ուսումնասիրությունների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

### **2.3 Ընդհանուր օգտագործման միջպետական և հանարապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգման աշխատանքների մշտադիտարկում և հսկողություն**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են նախապատրաստական և պլանավորման աշխատանքներ: Մասնավորապես ուսումնասիրվել են՝

- Մ-15 /Մ-4/ Վերին Պտղնի-Մասիսի տրանսպորտային հանգույց,
- Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման,
- Մ-10 Սևան-Մարտունի-Գեղափ-/Մ-2/,
- Մ-11 Մարտունի-Վարդենիս-Լ ՂՀ սահման միջպետական նշանակության,
- Հ-21 /Հ-75/ Հոռոմ – Արթիկ – Ալազյազ,
- Հ-12, Մասիսի տրանսպորտային հանգույց, Մասիս – Ռանչպար – Արաքս – Զրառար – /Մ3/,
- Հ-13 /Մ-3/ (Վաղարշապատ) - Մասիս - /Մ-2/
- Հ-10 /Հ-8/ Ոսկեփայտ-Վեդի-Լանջառ-/Մ-2/ հանրապետական

նշանակության ավտոճանապարհների որոշ հատվածների ա/բ ծածկի առկա վիճակը:

Իրականացվել է չափագրում Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի Իսլամական Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի որոշ հատվածներում:

Ուսումնասիրության և չափագրման արդյունքում կայացվել են միջին նորոգման ենթակա ճանապարհների թերությունների ակտերի կազման վերաբերյալ որոշումներներ:

Բոլոր կատարված հսկողությունների և ուսումնասիրությունների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

**3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ  
ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ  
ԵՎ/ԿԱՄ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ  
ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԼԱԲՈՐԱՏՈՐ  
ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**

Հաշվետու ժամանակաշրջանում լաբորատորիայի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- լաբորատորիայի սարքավորումների և գործիքների տեխնիկական վիճակի կարգաբերում, մաքրում և թերությունների վերացում.
- հետազոտասկան աշխատանքներ և մեթոդական ուղեցույցների մշակում.
  - քարային նյութերի (խճի, կոպիճի, ավազի, հանքային փոշու)
  - հանքային կապակցանյութերի (ցեմենտ) և ցեմենտաբետոնի
  - բնահողի խտության.
  - ճանապարհային նավթային բիտումի որակի վերաբերյալ:

Ուսումնասիրությունների արդյունքում նախապատրաստվել են նշված նյութերի լաբորատոր փորձարկումների ուղեցույցների հայերեն տարբերակներ՝ գործող պետական ստանդարտներին համապատասխան:

Այդ ուղեցույցները հնարավորություն են ստեղծում լաբորատորիայի և ՊՈԱԿ-ի համապատասխան մասնագետների հետ համատեղ իրականացնել որակի հսկողության աշխատանքներ, որը նպատակաուղղված է կատարվող շինարարական աշխատանքների որակի հսկողության բարելավմանը:

Միջին նորոգման նախագծային աշխատանքներ իրականացնելու նպատակով կատարվել է Մ-2 Երևան - Երասխ -- Գորիս - Մեղրի - ԻԻՀ սահման ավտոճանապարհի կմ 311+300 - կմ 328+800 տեղամասի հորատման աշխատանքներ: Հորատվել և լաբորատորիա է տեղափոխվել ընդհանուր քանակով 31 հատ հանուկ:

Լաբորատորիան իր գործառույթների ոլորտի շրջանակներում իրականացրել է տնօրինության կողմից հանձնարարված նաև այլ աշխատանքներ, մասնավորապես՝ մասնագիտական խորհրդարկական աջակցություն է տրամադրել շինարարական մի

շարք կազմակերպությունների ճանապարհաշինարարության ոլորտում  
օգտագործվող շինարարական նյութերի վերաբերյալ:

Բոլոր կատարված հսկողությունների արդյունքները պահվում են  
«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում: